# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

30 ապրիլի 2019 թ. N 318-Ն

ք. Ստեփանակերտ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:

3. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատված է»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2019 թվականի
ապրիլի 30-ի N 318-Ն որոշման

# Ց Ա Ն Կ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

### 1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը | |
|---|---|---|---|---|---|
| | | Հիմնական կրթությամբ | Միջնակարգ կրթությամբ | Հիմնական կրթությամբ | Միջնակարգ կրթությամբ |
| 0402 | Մանկաբարձական գործ | 8 | - | 22 | - |
| 0406 | Քույրական գործ | 8 | 6 | 22 | 24 |
| 0418 | Բուժական գործ զինված ուժերում | 8 | - | 22 | - |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***24*** | ***6*** | ***66*** | ***24*** |

### 2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| 0501 | Գործիքային կատարողական արվեստ<br>այդ թվում՝ | 17 | 7 |
| | դաշնամուր | 6 | 4 |
| | լարային գործիքներ /ջութակ/ | 2 | - |
| | փողային գործիքներ | 3 | 1 |
| | ժողովրդական գործիքներ | 6 | 2 |



01-32
2 [illegible] 19

| | | | |
|---|---|---|---|
| 0502 | Երգեցողություն | 3 | 6 |
| 0503 | Երգչախմբավարություն | 2 | 1 |
| 0504 | Երաժշտության տեսություն | 1 | 1 |
| 0505 | Էստրադային երաժշտարվեստ | 2 | 5 |
| | **Պահուստային տեղեր** | **5** | **-** |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***30*** | ***20*** |

## 3. ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

### 3.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| | | Հիմնական կրթությամբ | Հիմնական կրթությամբ |
| 0514 | Դիզայն ըստ ճյուղերի | 10 | 5 |
| 0515 | Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ ըստ ճյուղերի | 10 | 5 |
| 2014 | Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում | 5 | 10 |
| 2808 | Հագուստի մոդելավորում և նախագծում | 10 | 5 |
| | **Պահուստային տեղեր** | **5** | **-** |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***40*** | ***25*** |

### 3.2. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը (միջնակարգ կրթությամբ) |
|---|---|---|
| 2302 | Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում | 15 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***15*** |

## 4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը |
|---|---|---|
| 0319 | Պարի ուսուցում (Միջնակարգ կրթությամբ) | 10 |
| 0506 | Դասական պար (4-րդ դասարանն ավարտած) | 10 |
| | Ժողովրդական պար (8-րդ դասարանն ավարտած) | 10 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***30*** |

## 5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ) | Վճարովի տեղերը (միջնակարգ կրթությամբ) |
|---|---|---|---|
| 2014 | Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում | 15 | - |
| 2203 | Համակարգիչների շահագործում | 15 | - |
| 2304 | Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում | 20 | 15 |
| 2311 | Հասարակական սնունդ | 20 | 15 |
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) | 25 | - |
| 2603 | Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա | 15 | - |
| | **Պահուստային տեղեր** | 10 | - |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***120*** | ***30*** |

## 6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ) |
|---|---|---|
| 1207 | Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա | 15 |
| 2304 | Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում | 15 |
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում /ըստ տեսակների/ | 15 |
| 2704 | Գինեգործություն և հյութերի արտադրություն | 15 |
| 2809 | Կարի արտադրության տեխնոլոգիա | 15 |
| 2905 | Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում | 15 |
| | **Պահուստային տեղեր** | 5 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***95*** |

## 7. ՇՈՒՇԻԻ «ԵՂՆԻԿ ՄՈՂՅԱՆ» ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ) | Անվճար տեղերը (միջնակարգ կրթությամբ) |
|---|---|---|---|
| 1002 | Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում | 15 | 15 |
| 1006 | Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում | 15 | 15 |
| 1210 | Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա | 15 | |
| 2311 | Հասարակական սնունդ | 15 | |

| | | | |
|---|---|---|---|
| 2809 | Կարի արտադրության տեխնոլոգիա | 15 | |
| 2902 | Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում | 15 | 15 |
| 2907 | Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ | 15 | |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում | 15 | |
| | **Պահուստային տեղեր** | 5 | |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***125*** | ***45*** |

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**